ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18.05.2020թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) 2020 թվականի մայիսի 12-ին և 14-ին նախատեսվող և չկայացած (քվորում չլինելու պատճառով) նիստերում ընդգրկված հարցերը Խորհրդի անդամներ՝ Ա. Ասոյանի, Ք. Գրիգորյանի, Շ. Դանիելյանի, Վ. Պետրոսյանի առաջարկներով որոշվել է իրականացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի մայիսի 15-ին և ավարտվել 2020 թվականի մայիսի 18-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին 1-ին եռամսյակի հաշվետվության քննարկում և հավանության արժանացում:

2. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում:

3. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման ներկայացում և հաստատում:

4. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցի նախագծի քննարկում և հաստատում:

5. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի անցումային հաստիքացուցակը հավանության արժանացում:

6.[1] Խորհրդի հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների (Հ. Պողոսյան, Շ. Դանիելյան, Վ. Պետրոսյան) անդամությունը երկարաձգելու կամ նոր անդամ ընտրելու հարցի քննարկում և որոշման կայացում:

---

[1] Կրճատվել է հետևյալ պարբերությունը.

1) Նշված անդամների անդամության երկարաձգում՝ նշում է ԿՈՂԱՄ

Քվեարկությանը մասնակցել են՝

Զ. Բաթոյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղեկալ

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Վ.Պետրոսյան Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա. Թորոսյան - ՀՀ առողջապահության նախարար

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

	Հարց 1	Հարց 2	Հարց 3	Հարց 4	Հարց 5	Հարց 6
Զ. Բաթոյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ
Ա. Ասոյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ **(ներկայացվել է դիտարկում՝ կցվում է)**	Կողմ	Կողմ
Ա. Ավանեսյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ
Ք. Գրիգորյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ
Կ. Բրուտյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Դեմ **(ներկայացվել է դիտարկում՝ կցվում է)**	Կողմ

2) Նոր անդամ ընտրելու համաձայնություն՝ նշվում է Դեմ

3) Եթե առկա են 1-ին և 2-րդ կետերով քվեարկելու համար ձայներ միաժամանակ, ապա հստակ նշվում է անդամի անունը, ազգանունը և «ԿՈՂՄ» կամ «ԴԵՄ» նշումը.

Գ. Գրիգորյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ
Շ. Դանիելյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ
Վ.Պետրոսյան	Կողմ	Կողմ	Կողմ	Կողմ	Դեմ	Կողմ

Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին 1-ին եռամսյակի հաշվետվությանը:
2. Ընդունել ի գիտություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել ներկայացված հաշվետվությամբ առաջարկությունների կատարումը:
3. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
4. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը:
5. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակին:
6. Երկարաձգել Խորհրդի անդամների՝ Հ. Պողոսյանի, Շ. Դանիելյանի, Վ. Պետրոսյանի անդամությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ